



ՇԱՐԱԹԱԹԵՐԹ

ԿՐՕՆԱԿԱՆ, ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ, ԸՆՏԱՆԵԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ



ՀԱՏՈՐ ԽԶ.

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ, ՓԵՏՐՈՒՍՐ 18, 1893

ԹԻԻ 7

ԲՈՂԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Մի Յուսահատիք	49
Յողնած Մարդիկ Եկեղեցի Երթալու. Են	49
Աւելի Յառաջ	49
Ուղեորութիւն ի Հիւսիսային Իտալիա	50
Աշխատութեան Մէջ Գոհունակութիւն	50
Դժուարին Գործ	51
Ամերիկայի Գիւտը	52
Նախնի Բժիշկը	52
Թղթակցութիւնը	52
Պատմականութիւն Աւետարանաց	52
Թանգրակեցիք	53
Հանգէս Քաղաքական	53
Գրամական	56

ԱՒԵՏԱՐԵՐ ՇԱՐԱԹԱԹԵՐԹ. Կը հրատարակուի ամէն շաբաթ օր:

Տարեկան գինն է ամէն տեղոյ համար կանխիկ 1 1/2 մեծիտիյէ, վեցամսեայն՝ 3/4 մեծիտիյէ: Թղթատարի ծախքը թմբագրութեան վրայ է: Մէկ քերթի գինն է 30 փարսի թմբագրութեան, բաժանորդագրութեան եւ քրթատարութեան պատկանեալ ամէն գրութիւնը պարտին ուղղուիլ առ Մր. Հ. Ս. Պարնքմ, Ամերիկան Խան, Կ. պոլիս:

Ամերիկայի Միտիսարոց Ընկերութեան կողմէն
Ճ. Բ. ԿՐԻՆ, ԱՐՏՈՒՍԵՐ
Հ. Ս. ՊԱՐՆԵՄ, ՏԵՐԵՆ-ԽՄԵԱԳԵՐ

ՄԻ ՅՈՒՍԱՀԱՏԻՐ

Աշխարհ գոյութեամբ և պայքարներով լի է, և շատ բաներ մթին ու վնասեցուցիչ կ'երևին. այսու ամենայնիւ լոյս կը տեսնուի մեր դիմացը, և եթէ յուսանք ու հաստատ կենանք, Տէրը փրկութիւն պիտի տայ: Թերևս չկրնանք գիտնալ թէ օգնութիւնն ինչպէս պիտի գայ, սակայն քանի՜ քանի անգամներ Տէրը յօգնութիւն փութացած է իւր ժողովրդեան երբ աշխարհային ամէն ակնկալութիւնը և յոյսեր ի դերև ելած կը թուէին:

Ոչ միայն մարդկային ոյժ ունինք, այլ նաև մեր ետև ունինք Աստուծոյ զօրութիւնը, եթէ իրօք կը վստահինք Տէրոջը: Եթէ Անոր կամքը կը կատարենք և Անոր որոշած ճամբուն մէջ կը քայլենք, ու և է հետևանքէ վախնալու չենք: Կրնանք պարզապէս յառաջ երթալ վստահ ըլլալով թէ Նա զմեզ պիտի չթողու, ոչ ալ երեսէ ձգէ:

Աշխարհի վրայ անապատի մէջէ կը ճամբորդենք, և շատ որոգայթներով պա-

շարուած ենք. թշնամիք կը յարձակին մեր վրայ և մեր առջև եղած ճամբան կրնայ փակուիլ, այնպէս որ փախուստի միջոց չկենայ: Սակայն եթէ միտ դնենք կենդանի Աստուծոյ խօսքին, հնազանդինք Անոր հրամաններուն և դիտենք Անոր Նախախնամութեան և Հոգւոյն տնօրինութիւնները, անշուշտ պիտի գտնենք այն օգնութիւնը և իմաստութիւնը որոյ պէտք ունինք, և մեր նեղութեան ժամանակ Աստուած պիտի ըլլայ մեր Օգնականը, մեր Պաշտպանը, մեր Զօրութիւնը և Ազատարարը:

ՅՈՂՆԱԾ ՄԱՐԴԻԿ ԵԿԵՂԵՑԻ ԵՐԹԱԼՈՒ ԵՆ (ՓԵՐԷՎ ԿԵՆՔԵՐ)

Յողնութեան պատճառաւ ամբողջ կիրակին տունը մնացողներէն շատեր մեծ սխալ կը գործեն: Ասանք շատ աւելի յոգնած կ'ըլլան կիրակի երեկոյ քան զոր պիտի ըլլային եթէ դէթ մէկ անգամ եկեղեցի դայած ըլլային. վասն զի կիրակի օրուան ժամերը շատ դժուարաւ կ'անցնին եթէ մարդ ընելու կամ խորհելու բան չունենայ: Օրը անօգուտ կերպով անցրցած ըլլալու դիտակցութիւնն ևս երբեմն մտաւոր դժգոհութիւն կ'աւելցունէ այն թուրութեան վրայ որ արդիւնք է ծուլութեան:

Բայց աստի, այդ յոգնած անձինք յաճախ մտքի և սրտի կազդուրում կը գտնեն եկեղեցոյ հանդարտ պաշտաման առեւն: Անոր միջոցաւ այդ անձանց մտաւոր մթնոլորտը կը փոխուի, անոնց կը թելադրուին խորհուրդներ, շարժառիթներ և զգացումներ որ իրենց գործին շրջանակէն դուրս կը գտնուին: Չարաչար աշխատող արհեստաւոր մը, խանութպան մը, տնտես մը, կամ ուսուցիչ մը շուտ կրնայ հանգստանալ հանգստեան օրուան մէկ մասին մէջ իւր խորհուրդներն այս կերպով սովորականէն տարբեր նիւթերու դարձունելով:

Գիտենք քանի մը օրինակներ յորս այս կերպը գործադրուած է գերազանց արդեամբք: Մարդիկ որ շատ յոգնած ըլլալով կիրակի օրը տունը մնալ կ'ու-

ղէին փոխանակ եկեղեցի երթալու, հաւանած են փորձ մը ընել՝ կիրակի օրը եկեղեցոյ մէջ հանդիստ փնտռելով ինչպէս իրենց հոգիներուն նոյնպէս և մարմիններուն համար, և ասանք կը վկայեն թէ դատած են իրենց փնտռածը, թէ եկեղեցի երթալը աւելի հանգստութիւն տուած է քան յօգնութիւն, և թէ իրենց կիրակիները տան մէջ անցունելով այնչափ լաւ չէին հանգստանար որչափ կը հանգստանան եկեղեցի երթալու սովորութիւն կազմելէ հետէ:


ԱՒԵԼԻ ՅԱՌԱՋ

Աստուծոյ զաւակը դանդաղելու կամ յապաղելու ժամանակ չունի: Այս աշխարհն անոր հանգստութեան կամ խաղաղութեան կամ ուրախութեան տեղը չէ: Հանգստութիւն ունի նա, սակայն այդ հանգստութիւնն Աստուծոյ սիրոյն կամ Անոր Նախախնամութեան մէջ կը գտնուի: Խաղաղութիւն ունի, սակայն խաղաղութիւնը հաւատքի մէջ կը կայանայ: Ուրախութիւն ունի, սակայն ուրախութիւնն Աստուծով է:

Բայց օտարական մ'է նա հոս: Այս աշխարհի վրայ միշտ դէպ յառաջ ընթացք մը ունի: Չկայ տեղ մը ուր դադրի արթուն կենալէ, կամ գըլըլը վար դնէ նիւրհելու համար: Պարտի յառաջ երթալ: Նոր պարտականութիւնք իւր առջև կ'երկն, նոր բեռներ իրեն համար կը պատրաստուին, և միւս կողմէ ամէն առաւօտ ու ամէն ցերեկ նոր ողորմութիւններ կը բերեն:

Քրիստոնեան դո՛հ ըլլալու չէ իւր կատարած գործով. աւելի դարձ կայ զոր պէտք է կատարել, գոյութեան իրենց կան դեռ որոյ պէտք է յաղթել, հոգևոր թշնամիներ կան դեռ զորս պէտք է նուաճել, ծուռեր կան դեռ զորս պէտք է ուղղել: Այսպէս քրիստոնեայ աշխատաւորին գործն է շարունակ շարժիլ, արթուն մնալ, աղօթել և դործել:

«Չէ թէ ես արդէն առեր եմ», ըսաւ մեծ առաքեալը, «կամ արդէն կատարեալ եղեր եմ...», բայց մէկ բան մը կայ, որ ետևի եղածները մոռցած



եմ, ու առջևի եղածներուն կը դիմեմ. նպատակը դիտելով՝ Գրիստոս Յիսուսով եղած Աստուծոյ վերին կոչմանը մրցանակին կը վազեմ:՝ Գրիստոսնան երբեք գոհ ըլլալու չէ մինչև որ իւր պարտքը կատարէ: Կատարելապէս հանդարտ սիրտ ունենալու չէ մինչև որ մտնէ այն հանգիստը որ Աստուծոյ ժողովուրդին կը մնայ: Մնոր հոգին երբեք գոհ ըլլալու չէ մինչև որ արթննայ իւր Տէրոջ նմանութեամբ, երբ ամէն մարտում կը վերջանայ, ամէն հակառակորդ կը ջնջուի, և յաւիտենական խաղաղութեան, հանգստեան և օրհնութեան օրը կը հասնի:

Այդ օրուան համար աղօթեմք և սուգանք. աշխատիք մինչև որ Տէրն զմեզ կանչէ ընդունիլ մեծ վարձատրութիւնը:

ՈՒՂԵՒՈՐՈՒԹԻՒՆ Ի ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ԻՏԱԼԻԱ 10.

[Խմբագրական]

Մեր նախորդ յօդուածը վերջացուցինք նկարագրելով Միլանէ Ի Բոմոյ մեր կարծ ուղեւորութիւնը: Բոմոյ լիճը, որոյ երկայնութիւնն է իբր 30 մղոն և մեծագոյն լայնութիւնը՝ 2½ մղոն, բազմաց կարծեօք գեղեցկագոյն լիճն է Ի հիւսիսային Իտալիա: Վաղեմի հոռոմայեցի բանաստեղծը, Վերգիլիոս, այս լճին գեղեցկութիւնը կը ներբողէ: Այն շոգեհաւը յոր մտանք Բոմոյ՝ լճին երկու կողմը շատ տեղեր հանդիպեցաւ, և տախտակամածին վրայ ունեցանք շրջակայ տեսարանները դիտելու փառաւոր պատենութիւն մը: Լիճը կը գտնուի լեռներու մէջտեղ, որոցմէ ոմանք մինչև 7,000 ոտնաչափ կը բարձրանան, և անոնց կողերը ծածկող ծառատաններուն, դաշտերուն և այգիներուն մէջ կառուցուած են շքեղ ամարանոցներ որ Միլանցոց հարուստ դասուն կը վերաբերին: Գիշերը Բատենապպիա անցուցինք, լճին արեւմտեան եզերքը: Չիշտ մեր դիմացը կը գտնուէր Պէլլաճիոյ, որ շինուած է Բոմոյ լճին Լէքքոյ լճին հետ միացման տեղոյն վրայ: Երեկոյին թիաքարչ նաւակ մը վարձեցինք և լճին վրայ քանի մը մղոն դէպ ի վեր նաւեցինք՝ մտիկ ընելով նաւակներու մէջ նստած ուրիշ զբօսաշրջիկներու նուագածութեանց և դիտելով գրեթէ լրացեալ լուսինը որ լեռներուն հետեւէն կը բարձրանար: Հետեւեալ օրը ուրիշ շոգեհաւ մը նստելով Լէքքոյ լճին վրայէն դաջինք համանուն փոքր քաղաքը, ուր վերստին երկաթուղւոյ գծին պատահեցանք: Զբօսաշրջիկք յաճախ մի և նոյն ուղեւորութեան միջոցին կ'երթան Բոմոյ, Լուկանոյ և Մաճճիորէ լիճերը: Մաճճիորէ ամենէն մեծն է, և 1883ին այս լճին հարաւային կողմը բոմոստը Արոնա քաղաքէն նաւարկեցինք մինչև Լոքքարնոյ, որ հիւսիսային ծայրը կը գտնուի: Լոքքարնոյ Զուրիցիոյ կը վերաբերի, և անտի ճամբորդեցինք այն երկաթուղեաւ որ կ'անցնի Սէն Կոթարի փապուղւոյն, աշխարհի մեծագոյն փապուղւոյն, մէջէն: Երկու լիճերուն տեսարաններն իրարու շատ նման են: Մաճճիորէ լճին մէջ կայ Պերրոմէան կղզիք անուն գեղեցիկ կղզեխումբ մը: Լուկանոյ լիճը, որ միւս եր-

կուքին մէջտեղ կը գտնուի, անոնցմէ շատ աւելի փոքր է:

Լէքքոյէ սկսող երկաթուղին լճին եզերքէն կ'երթայ մինչև լճին հարաւային ծայրը, ուրիշ ծագում կ'առնու Աստա գետը, որոյ միջոցաւ լճին ջուրերը կը վազեն Փոյ գետը: Առաջին կարեւոր տեղը ուր հասանք էր Պէրկամոյ, իբր 40,000 բնակչօք քաղաք մը: Պէրկամոյ Սան Ռէմոյի նման կը բաղկանայ երկու քաղաքներէ, հին և նոր: Նոր քաղաքը լայն փողոցներով շինուած է դաշտին վրայ և կէս մղոն հեռի է միւսէն: Հին քաղաքը բլրի մը վրայ շինուած է նեղ փողոցներով, որոց առողջապահական տեսակետով փաստակար ըլլալն ապացուցած է արդի բժշկական գրաստութիւնը: Պէրկամոյ գլխաւորապէս նշանաւոր է այն մեծ տծնալաճառով որ ամէն տարի նոր քաղաքին մէջ տեղի կ'ունենայ օգոստոս ամսոյ կէսէն մինչև սեպտեմբերի կէսը, և որ մեծ կարեւորութիւն ունի, Ի մասնաւորի՝ մետաքսի առեւտրոյ համար: Քաղաքին մէջ կը կանգնի արձանն թորգուաթթոյ Թաստոյի, որ Տանթէէ կտքը թերեւս խալցցի նշանաւորագոյն բանաստեղծն է, և որոյ հայրն ևս, նոյնպէս բանաստեղծ, հոն ծնած է: Պէրկամոյի մէջ ծնած են նաեւ Տոնիճէթթի և Բուպինի, որք երկօքին աշխարհահռչակ համբաւ ստացած են դարուս առաջին կիսուն մէջ, մին իբրեւ երաժշտական եղանակներու հեղինակ և միւսն իբրեւ երգիչ:

Պէրկամոյէ Վենետիկ տանող գրեթէ ամբողջ ուղւոյն վրայ յոյժ հետաքրքրական տեսարաններ կան, վասն զի ճամբան կ'անցնի այն լեռնոտ երկրին հարաւային եզերքէն: Պէրկամոյէ քիչ մը անդին Միլանէ ուղղակի Վենետիկ տանող երկաթուղին կը միանայ Լէքքոյէ եկող երկաթուղւոյն: Վեց փոքրագոյն կայարաններու մէջ կանգ առնել և Իզէոյ լճէն ծագում առնող Օկլիոյ գետէն անցնելէ կտքը հասանք Պրէշիա: Այս քաղաքն ի հնումն Պրիքսիա կը կոչուէր, և ծաղկեալ տեղ մ'էր մեր Տէրոջ ժամանակ: Չորս հարիւր տարի առաջ Միլանի հետ կը մըցէր իւր հարստութեամբ և աղղեցութեամբ, սակայն 1512ին Փրանսացւոց կողմէ աւարի առնուեցաւ և այնուհետեւ այլ ևս չգտաւ իւր նախկին մեծութիւնը: Հիւսիսային Իտալիա քանի մը հարիւր տարի, ուրիշ ուրիշ տեղէ աւելի, Եւրոպայի պատերազմաց ասպարէզ եղաւ, և այս տեղոյն բոլոր քաղաքները մեծ վնաս կրած են բազմաթիւ պաշարումներէ կամ տիրապետութեան փոփոխութիւններէ: Ի Պրէշիա կան քանի մը ուշագրաւ եկեղեցիներ, հանրային մեծ գրատուն մը և գերեզմանատուն մը, որ Իտալիոյ գեղեցկագոյն գերեզմանատունը կը համարուի: Յամին 1822 երբ պեղուներ կը կատարուէին այս քաղաքին մէջ, յերեւան բերուեցաւ հին հեթանոսական տաճար մը, որոյ արձանագրութենէն կը տեսնուէր թէ՛ Վեսպասիանոս կայսր զայն շինած էր յամի Տեառն 72: Այս տեղոյն ամենէն քաջածանօթ քաղաքացին եղած է Պրէշիացի Արնոլտ, Բարեկարգութեան կարպետներէն մին, որ ծնաւ յամին իբր 1100 և քահանայ եղաւ իւր բնիկ քաղաքին մէջ: Սա հակառակեցաւ Պապին աշխարհային իշխանութեան, և շատ ժողովրդական ըլլալով ժողովրդեան գրուին անցաւ և յաջողեցաւ նոր վարչութիւն մը ձեռք բերել Հռոմ քաղաքին համար: Սա-

կայն ապա Ֆրէտէրիք Պարպարոսսա ձերբակալեց զԱրնոլտ և յանձնեց պապական իշխանութեանց, որք կախեցին զնա և ապա մարմինն այրեցին: Արնոլտ ո'չ հետեւող թողուցած է և ո'չ գրութիւն, սակայն անոր անունը դեռ շատ ժողովրդական է յիտալիա, և աստի կ'երեւի թէ, ինչպէս անոր թշնամիք ևս կ'ընդունին, շատ պերճախօս և աղղեցութեան տէր մարդ էր նա: Մեր առաջնորդ զրքոյկն ուշագրութիւն կը հրաւիրէ Պրէշիայի մօտակայ ըլրոց կարմիր գոյնին, որ կը ցուցնէ թէ առատ երկաթ կայ հողին մէջ:

Պրէշիայէ երկաթուղեաւ կէս ժամ ճամբորդելով հասանք Տէզէնճանոյ, Կարտա լճին հարաւային արեւմտեան ծայրը քրտնուած նաւահանգիստ մը: Կառախմբէն շատ լաւ կը տեսնէինք լիճը և հարաւային ծայրն Սէրմիոնէ թերակղզւոյն, որ ցամաքին կցուած է նեղ պարանոցով մը: Թերակղզւոյն վրայ կայ հին դղեակ մը: Կարտա իտալական լիճերուն մեծագոյնն է. երկայնութիւնն է 33 մղոն, և հարաւային ծայրին լայնութիւնը՝ 7 մղոն: Լճին հարաւային կիսուն եզերքները տախտակ և լաւ մշակեալ են: Հոս կլիման բաւական մեղմ է, այնպէս որ լեմոն կրնայ հասունալ, թէեւ լեմոնի ծառերը պէտք է խնամով պահպանել ձմրան մէջ: Լճին լայնքը կը նուազի դէպ հիւսիս, և հոն և գերքներն աւելի լեռնոտ են: Բիվա քաղաքը, որ լճին հիւսիսային ծայրը կը գտնուի, Աւստրիոյ կը վերաբերի, վասն զի աւստրիալական սահմանագիծը քաղաքին հարաւային կողմէն, անկէ քանի մը մղոն հեռուն, լճին վրայէն կ'անցնի: Տէզէնճանոյէ կտքը կու գայ Փոժժոյէնկոյ, որոյ հարաւային կողմը 1859 յունիս 24ին տեղի ունեցած է Սոյֆերինոյի արեւնահեղ ճակատամարտը՝ մէկ կողմէ Ֆրանսացւոց ու Իտալացւոց և միւս կողմէ Աւստրիացւոց միջև: Աւստրիացիք յաղթուեցան. այս կոիւր պատերազմին վճռական ճակատամարտը եղաւ, և քիչ կտքը խաղաղութիւն կնքուեցաւ: Փէշիէրա անուն ամբողջեալ քաղաքին մէջ երկաթուղին լճին եզերքը կը վերադառնայ: Այս քաղաքին քով Մինչիոյ գետը լճէն ծագում կ'առնու և ապա Փոյ գետը կը թափի: Փէշիէրայէ անդին 20 մղոն ևս ճամբորդելով հասանք Վերոնա:

ԱՇԽԱՏՈՒԹԵԱՆ ՄԷՋ ԳՈՃՈՒՆԱԿՈՒԹԻՒՆ

Աշխատութիւնը կարծես իբրեւ նեղութիւն կը նկատենք, և ոմանք՝ նոյն իսկ իբրեւ նուաստ բան: Արդեօք այս սխալ տեսութիւնը կը տածենք ծեր և անկար մարդոց դործել պարտաւորիլը տեսնելով, և ևրբեք չենք յիշեր թէ Աստուած Իւր ողորմութեամբ մտաց և մարմնոյ ընդունակութիւններ շնորհած է մեզ, որպէս զի անոնցմով Իրեն ծառայենք, նաեւ փնտռենք մեր երջանկութիւնը և օգուտը: Ուշագրաւ իրողութիւն մ'է որ տղայութեան ժամանակ կը հետաքրքրինք և կը զուարճանանք այն զբաղմամբք որք չափահասութեան մէջ անհաճոյ կ'երեւին մեզ: Եթէ, օրինակի աղագաւ, մայր մը իւր փոքր աղջկան ըսէ որ աւել մը առնու և իրեն օգնէ սենեակը կամ դրան առջեւն աւելով, փոքրիկը շատ կը հրճուի և կը հպարտանայ տեսնելով որ կարող է բան մը ընել տան մաքրութեան համար: Սակայն յետոյ եթէ նոյն աղջիկն սպասուհի ըլլայ՝

յայնժամ իրեն դժուար կ'երևի այդօրինակ գործով ապրուստ չափել: Օրինակ առնուհետև նաև փոքր տղայ մը որոյ հայրը զիցուք թէ աստղձագործ է: Այս տղան շատ անգամ իւր հայրը կը թախանձէ որ իրեն հրաման տայ քերիչը (բէնդ) կամ փորելու գործին գործածել: Սակայն եթէ նոյն տղան մեծնայ, թէև լաւ վարձք ընդունի աստղձագործութեան պարագելով, քիչ հաճոյք կը գտնէ անոր մէջ, եւ արդարեւ շատ անգամ ձանձրոյթ կը զգայ այդ գործէն: Աճապարանօք կ'աշխատի, եւ յաճախ կրցածին չափ լաւ գործ չհաներ: Շատ հոգածու կ'ըլլայ արձակման ժամուն հնչուելուն պէս աշխատութենէ դադարել:

Ամէնքս ալ գործելու եւ գործելէ հաճոյք զգալու համար ստեղծուած ենք: Արարիչը խորհելու համար ուղեղ եւ գործելու համար անդամներ տուած է մեզ: Եթէ ուղեղը կամ անդամ մը անգործ մնայ, շուտով կը տկարանայ: մինչ եթէ շարունակ գործածուի, կը զօրանայ եւ մեր կեանքն եւս կ'երկարի: Անդամներուն վրայ խօսելով, այս երկրին նման կլիմայ ունեցող տեղւոյ մը մէջ պէտք կը տեսնենք մեր ոտքերը միշտ ծածկել եւ կծկեցունել կօշիկներու մէջ, սակայն Հնդկաստանի նման տաք երկրաց մէջ բնիկք երբեք ոտնաման չեն հագնիր կամ լոկ հողաթափ կը գործածեն: Այս պատճառաւ անոնց ոտքերը կը զօրանան, գործ կատարելու ընդունակութիւն կը ստանան, եւ ոտից մատուցք գրեթէ ձեռաց մատանց չափ գործ կրնան տեսնել: Կը դարձանանք տեսնելով որ Հնդկը գետնէն փայտի կտոր մը կը վերցունէ ոչ թէ ձեռքով այլ ոտքով, ոտքի մատերով ամրապէս կը բռնէ զայն, եւ այսպէս իւր գործոց մէջ ուրիշ ձեռք մը կ'ունենայ:

Յաճախ կը լսենք «Գործել պարտաւորած ենք» դանդաղ: Եթէ ուղիղ խորհինք, պիտի տեսնենք թէ տարօրինակ խօսք է այդ: Շնորհակալ ըլլալու ենք, շատ շնորհակալ, որ կարող ենք մտքով կամ ձեռքով աշխատիլ, եւ իրական ուշադրութիւն պարտիմք առ այն ամէն պարտականութեանց զորս կատարել կը հրաւիրուինք: Օրինակի ազդեալ, ինչո՞ւ համար կօշկակար մը հաճոյք չզգայ երբ կատարեալ զոյգ մը կօշիկ կամ մուճակ չինէ: Ինչո՞ւ համար հաճոյք չզգայ մինչ կաշին կը ձեւէ, կօշիկին վրայի մատերը կը պատրաստէ, մինչեւ վերջն ամէն կողմերը լաւ յարմարեցունելով, ներքանը կը կարէ կամ կը գամէ փոքրիկ բեւեռներու փայլուն շարքերով: Երբ ասոնք աւարտին, ձանձրալի գործ է կրունկը չինել, ապա վերջին անգամ փայլեցունել կաշին, եւ զոյգ մը կօշիկը վեր բռնելով ինքնիրեն կարենալ ըսել, «Ես ըրած եմ այս ամէն գործը: Ձեռքերս չինամ են այս կօշիկը, եւ միտքս յղացած է ասոր դադարաբերը»: Ամէն այդ կամ կին արհեստաւոր իւր գործին վրայ նոյն լոյսով կարող չէ նայիլ:

Հաճելի չէ դրամ չափել, կին մը կամ գաւազներ, մայր մը կամ քոյր մը ապրեցունելու կարողութիւնն ունենալ եւ այլոց օգնութիւնէն կամ գթութիւնէն կախում չունենալ: Անգամ մը լսեցինք թէ բարեկեցիկ վիճակ ունեցող պարոն մը աստղձագործի մը մեծ դարձանք առթած էր ըսելով թէ իւր սենեկին ըտր կարտիներն ինք իւր ձեռքով չինամ էր: Ատաղձագործն այնքան կ'ազդուի անոր խօսելու ոճէն որ այնուհետեւ դանդաղ չընէր եւ հաճոյքով կը կատարէ իւր գործը: Զօրաւոր մարդ մը կամ

կին մը, որչափ եւ զղուած ըլլայ իւր առօրեայ զբաղումէն, թող յանկարծ հիւանդութեան անկողին իյնայ, եւ յայնժամ պիտի փոխէ իւր լեզուն: Յաւելով պիտի յիշէ այն օրերը երբ իւր ձեռքը, որ այժմ հաղիւ վերամակը վերցունելու կարողութիւն ունի, զօրաւոր եւ ուժով էր եւ կրնար կային գործածել կամ ծանր սակառ մը տանիլ: Շատ պիտի փափաքին, եւ իրենց գառն նեղութեան մէջ յաճախ պիտի աղօթեն, որ շուտ գայ այն ժամանակը յորում անգամ մը եւս կարենան սկսիլ իրենց առօրեայ գործը:

Ամէնքս ալ ծնած ենք կերպով մը գործելու համար, եւ ամէնքս ալ կը գործենք, ոմանք ուղիղ կերպով, ոմանք սխալ: Ծոյլ մարդը երբ թողուցած է իւր ձեռքերը, պարագ չկենար, այլ կը մտածէ հնարել այնպիսի բաներ որք սխալմամբ հաճոյք կը կոչուին եւ սրք, աւաղ, յաճախ մոլութեան կը փոխուին եւ իրեն եւ իւր պարագայից վրայ ներկայ եւ ապառնի թշուառութիւն կը բերեն: Այսպիսին գերեզման կ'երթայ առանց բարի գործոց հետքեր թողուիւր ետեւ: Աշխատասէր մարդը պարագ հաճոյքից վրայ խորհելու ժամանակ չունի: որչափ անձանթ ըլլայ աշխարհի, կ'երջանկացունէ իւր շուրջն եղողները, եւ անոնց սիրալիք յիշատակները կը պահէ իւր մտաց մէջ, երբ անոնք բաժնուին իրմէ: Եթէ հասկնայինք թէ աշխատութիւնը մեր կարողութեանց մշակութիւնն է լոկ, եւ թէ զայնս մշակելով՝ Աստուծոյ համար, մեր անձին բարեկալութեան եւ մեր պարագայից բարեկեցութեան համար գործած կ'ըլլանք, անշուշտ մեր բոլոր ճիգն ի գործ պիտի դնէինք այդպիսի բարեբաստիկ կացութեան մը հասնելու:

Պարտիմք մեր գաւազներն ի մանուկ տիոց վարժեցունել որ սիրեն գործել, այլոց օգնել իրենց տկար կարողութեամբք, հաճոյք զգալով այս անշահախնդրական աշխատութիւնէն: Եթէ անոնք այսպիսի կրթութիւն ստանան, երբ չափահաս ըլլան, պիտի չնեղեն զմեզ գործի դժուարութեան մասին գանգատներ ընելով: Պարտիմք քաղցր գոհունակութեամբ եւ խաղաղութեամբ ապրիլ եւ մեր խորհուրդներն երախտագրութեամբ բարձրացունել առ Նա որ իւր արարածոց ոչ մին կը մոռնայ, միայն կ'ուզէ որ անոնք իրենց ամէն տեսակ կարօտութեան մէջ իրեն դիմեն, եւ այն ատեն յօժար սրտիւ գործուադութ չօր մը ձեռքը կ'երկարէ անոնց:

ԳԺՈՒԱՐԻՆ ԳՈՐԾ

Երբ աչքէ կ'անցունէի օրագրութիւնները, ծերունի Հայր Վորտի որ շատ տարիներ հովուական պաշտօն վարեց Այըրնպուրիկի, Փէնսիլվանիա նահանգին երկաթուղւոյ եւ հանքաց կեդրոնին, մէջ, կը գրէ Եւրոպայի թղթակցաց մին, հանդիպեցայ պատմութեան մը որ կը ցուցնէ թէ արկածային մահուան լուրը հաղորդելն ինչ դժուարին է. նաև կը ցուցնէ թէ ամենէն բիրտ անձինք անգամ իրենց ներսի դին կը կրեն կարեկցութիւն եւ փափկանկատութիւն: Մեքենավարը, որոյ վրայ կը խօսի Հայր Վորտ, էր հանրաձանթ անձ մը Այըրնպուրիկի մէջ: Մեաւ երկու տարի առաջ: Մինչ Հայր Վորտ առաւօտ մը իւր սենեկին մէջ նստած գիր կը գրէր, զանգաղը հնչեց, եւ նորա կինը վեր գալով ըսաւ թէ բիրտ կերպարանքով մարդ մը տեսնել կ'ուզէր գնա: Իսկոյն իջաւ վար, եւ ահա հոն կը կանգնէր երկաթուղ-

ւոյ մեքենավար մը, եւ յայտնի էր թէ ուղղակի ճամբայէ կու գար: Սրահին մէջ կը կենար, եւ երէցը հրաւիրեց անոր ներս երթալ եւ նստիլ:

«Շատ շնորհակալ եմ, բայց չունիմ ժամանակ», ըսաւ մեքենավարը. «Կայ ըսել ձեզ թէ շոգեկառքին տակ մնաց տղայ մը իւր անդուշտութեամբ. արդեօք կարելի է որ դաք նայիք թէ կը ճանչնա՞ք անոր ընտանիքը եւ անոնց հաղորդէք այս գոյժը մեծ խոհեմութեամբ»: «Անշուշտ, եւ ես հիմա կ'երթամ», ըսի, եւ իրեն հետ ճամբայ ելայ երթալու, հարցուններ ըրի անոր մինչ կը քալէինք արագ արագ: «Ինչպէս պատահեցաւ այդ արկածը», հարցուցի: «Ես ալ այդ չեմ հասկնար», ըսաւ. «գիտէք կամուրջին այս կողմը գտնուող հողաբլուրը: Կատարումը կը սրանար անոր ըովէն, եւ կը թուի թէ տղան հողաբլրին գագաթէն վար զլորեցաւ եւ եկաւ սահեցաւ շոգեկառքին անիւներուն ներքեւ»: «Անմիջապէս մեռա՞ւ», հարցուցի:

Սոսկումը բռնած էր զիս, եւ մանաւանդ սարսափ կը զգայի երբ կը խորհէի թէ լուրն ինչպէս պիտի տանէի տղային մօրը ո՞վ եւ ըլլար նա:

«Այո, չեմ կարծեր թէ տղան զգաց կատարումին իւր վրայէն անցիլը: Չչարչարուեցաւ: Գիտնէն վեր ապինք, եւ երբ կայարանը հասանք, շիտակ մեր տունը տարի դնա եւ ահա անկէ եկայ տեսնել զձեզ: Կը յիշէք, Վերապատուելի, թէ ինչպէս եկաք այն ատեն եւ զգուշութեամբ իմացուցիք ինձ Ուիլիս յանկարծական մահը: Ինձ այնպէս թուեցաւ որ եթէ կարելից մը ունէի, դո՛ւք էիք այն»:

Յիշեցի թէ ժամանակաւ ստիպուեցայ երթալ այս մարդուն եւ տալ իւր ընտանեաց մէջ պատահած տագնապալի մահուան մը զոյժը. այդ մահը պատահեցաւ մինչ նա հեռուոր ճանապարհորդութիւն մը կ'ընէր: Մեքենավարը դարձեալ սկսաւ խօսիլ քիչ մը կանգ առնել ետքը: «Մահը», ըսաւ, «երբեմն աւելի սոսկալի կ'ըլլայ իւր յանկարծ հասնելովը: Կը յուսամ թէ կարող պիտի ըլլաք, Վերապատուելի, միտիթարել անոր մայրը: Մեծ հարուած պիտի ըլլայ խեղճին»: «Այո, մե՞ծ հարուած», պատասխանեցի. «քանի՞ տարեկան էր տղան»: «Որք տասն, գեղեցիկ տղայ մը, թուի գտուղ մտղերով եւ կապոյտ աչուրներով: Գրեթէ Ուիլիս տարիքը: Վերապատուելի, կը յուսամ թէ շատ չէք սոսկար երթալ եւ մօրն ըսել թէ իւր տղան երկինք դնացած է. այնպէս չէ՞»: «Ոչ, բայց հարկաւ ես կը խորշիմ այդ պարտականութենէն: Մտածէ անգամ մը, եթէ նա իմ տղան ըլլար»: «Անշուշտ, եւ ընկալանապէս: Նոյնպէս ինչպէս իմն առնուեցաւ յանկարծ երբ ես չէի խորհեր անոր վրայ: Մենք պարտիմք միշտ պատրաստ ըլլալ, այնպէս չէ՞, Վերապատուելի»: «Միշտ պատրաստ պէտք է ըլլանք», պատասխանեցի, սոսկման տարօրինակ զգացմամբ մը համակեալ: Հասած էինք տուն: Սմբոխ մը խոնուած էր տան շուրջը: Կը մեկնէին լոկ եւ ակնածանօք առ մեզ մինչ կ'անցնէինք եւ կը մտնէինք տուն: Եւ մինչեւ անգամ երբ կը մօտենայի անկողնոյն ուր ջախջախեալ մարմինը կը կենար, չէի կարող հասկնալ թէ ինչ պատահած էր:

Բարեկամս, մեքենավարը, իւր ձեռաց մին զբաւ ուսիս վրայ մինչ կը քաշէր ծածկոցը մեռեալին երեսին վրայէն, եւ ըսաւ

կարեկցութեան ձայնով մը, զոր ոչինչ բայց միայն բուն իւր ցաւագին կորուստը կրնար սորվեցուցած ըլլալ, «Վերապատուելի, այս է ամենէն դժուարին բանը զոր ստիպուած եմ կատարել երբեք, եւ որ վեր է իմ կարողութենէս, բայց Աստուած կարող է օգնել ձեզ եւ մօրը որպէս զի կրէք այս վիշտը»

Նայեցայ մեռեալին երեսը եւ ահա իմ տղային երեսն էր այն. Մոռցած էի թէ նա այդ առաւօտ կը խաղար վերոյիշեալ հողաբլրին մօտերը դրացեայ տղայի մը հետ կարող չեղանք երբեք հասկնալ թէ տղան ինչպէս ինկած էր շոգեկառաց անիւններուն տակը. Բայց մինչեւ մահուանս օրը, թէ՛ կանուխ զայ այն թէ՛ ուշ, երբեք պիտի չհասնամ այն գրագումբը — դոր ունեցանք կինս եւ ես երբ ժամանակը բուժած էր մեր կորստեան վէրքը — կարեկցութեան եւ միախնայեցողութեան զգացումը, զոր վիշտը կը սորվեցունէ մինչեւ իսկ բրտագոյն սիրտերուն ցուցնել այնպիսեաց որ կորուսած են իրենց սիրելիները:

Սա խօսքերը, «Աստուած կարող է օգնել ձեզ եւ մօրը որպէս զի կրէք այս վիշտը» հասկցուցին ինձ իմ միտքորոշեանս արժէքը ի ներկայութեան վերջին դաժան թըշնամունջն եւ իմ մեծ կորստեանս:

ԱՄԵՐԻԿԱՅԻ ԳԻՒՏԸ

Անհաւատալի կը թուի որ երկրիս ամբողջ մէկ կիսագունտը անձանօթ մնայ պատմական որ եւ իցէ արձանագրութիւն ունեցող հազարաւոր տարեաց մէջ: Ըստ հասարակ ժամանակագրութեան իբր 3,500, կամ աւելի ճշդիւ, 3,497 տարի անցած էր Քոլոմպոսի գիւտէն առաջ, եւ դժուարին է հաւատալ որ այդ բոլոր յիսունեւերեք դարուց մէջ ծանօթութիւն մը չկենայ այն ընդարձակածաւալ երկրաց վրայ որք այժմ կը բաղկացունեն երկու Ամերիկայից ցամաքները: Եթէ ի ձեռին ունենայինք բոլոր այն գիրքերը որք կորսուեցան բարբարոսաց ձեռքով երբ նոքա աւերեցին զիտալիա եւ բազմիցս յաջորդաբար աւարեցին զՀոմ, եթէ մեզ հասած լինէր մինչեւ իսկ համառօտութիւն մը տեղեկութեանց որ կը պարունակուէին Աղեքսանդրիոյ գրատան տուժարներուն մէջ, ամենայն հաւանականութեամբ պիտի գտնուէին գրուածներ Նոր Աշխարհին գոյութեան վրայ:

Ստոյգ է որ Եգիպտացիք ծանօթ էին այդ իրողութեան, վասնզի Սէյսի քուրմը անոր վրայով տեղեկացուցին զՍողոն, յոյն փիլիսոփան, պատմելով աղէտ մը որ յառաջ եկած էր մեծ կղզւոյ մը Ստրանտեան Ովկիանոսին մէջ կուլ արուելէն: Գիտէին թէ մեծ ցամաքներ կը գտնուէին անդր քան զսահմանս Եւրոպայի, Ասիոյ եւ Աֆրիկէի: Սոյն ծանօթութիւնք հազորդուեցան Սողոնի նախ քան զՔրիստոս վեցերորդ դարուն, եւ նոյն ժամանակները Պիւթագորաս, նախնի Ֆիլիքադէտ փիլիսոփայից մեծագոյնը, կը հաստատէր թէ երկիրս է գնդաձեւ, եւ թէ անոր հետարագոյն կազման կայ հարկէր որ գոյութիւն ունենային ցամաքներ որ հաւասարակշիռ գային արեւելեան ցամաքներուն: Անկէ երկու դար ետքը քանի մը օտարական նաւաւորք երևեցան Աթէնքի վաճառանոցին մէջ եւ կը պատմէին թէ իրենք փոթորիկէ մը տարուած էին բազում օրեր Ստրանտեան Ովկիանոսէ դէպ արեւմուտք, եւ ի վերջոյ ապահովութեամբ հասած էին արեւմտարձային երկիր մը հարուստ պտղովք եւ զաւարիօք, ուր վայելե-

ցին բնիկներուն մարգարական ասպնջականութիւնը եւ ընդունեցին անոնցմէ պաշար եւ պիտոյք երբ վերադարձան անտի դէպի հայրենիք՝ ամենայն յաջողութեամբ ճանապարհորդելով: Բայց այն ժամանակները անօրեայ դէպքեր չէին գրուեր օրաթերթերու մէջ, եւ ուստի բազում կարեւոր իրողութիւնք եւ գիպուածք չուտով կը կորսուէին հասարակաց ծանօթութեան մթերքին մէջէն, եթէ չյիշատակուէին անհատից յուշատետրերուն մէջ:

Մեքսիքոյի, կեղրոնական Ամերիկայի եւ Փերուի քաղաքակրթութիւնք անտարակոյս բերուեցան եւ հաստատուեցան ի Նոր Աշխարհ օտարականաց ձեռամբ, եւրոպացի կամ ասիացի, որք այեաց բնութենէն քուեցան այն ծովեզրները: Մովածոցոյ Յորձանքը (Gulf Stream) եւ զօրաւոր հողմոյ հոսանքներ շատ մը աւելի նպաստաւոր են նաւերն Ամերիկայէ Եւրոպա մղելու քան Եւրոպայէ Ամերիկա. բայց Ասիոյ եւ Ամերիկայի մէջտեղ դասուող նեղ ջուրերը կը հրաւիրեն դաղթականութիւն եւ հազորդակցութիւն ի մէջ Հին եւ Նոր Աշխարհաց, մինչ ճափոնական հոսանքը կը վաղէ Ասիայէ դէպ յԱմերիկա: Չենք կրնար տարակուսիլ թէ կար հազորդակցութիւն երկու կիսագնդից մէջտեղ, բայց ատոր ծանօթութիւնը կորեւա իջաւոր Դարուց մէջ: Սբ. Պրէնտանի, վեցերորդ դարու իւլանտացի միսիոնարին, ծովագնաց ուղեորութիւնք, նաեւ տասներորդ դարուն մէջ Լայֆ Էրիքսըն Նորվեկիացեաները մեծ վիճաբանութեանց դուռ բացին: Սբ. Պրէնտանի արկածք զբռնուած են նորա «Իմբանս»ին (Փափառմունք) մէջ որ է բանաստեղծական ընտիր գործ մը: Նորվեկիացեաց Սակայք, սկանտինավեան զիցտարնական աւանդութիւնք, կը պատմեն Էրիքսընի ուղեորութեանց վրայ: Մեծ հաւանականութեամբ այլք ըրին իսկական զիւտեր, բայց նոքա երբեք չեն նսեմացուներ Քոլոմպոսի պատիւը: Նա էր մի միայն մարդը որ կարող էր գտնել Նոր Աշխարհ մը եւ գտնալ պահել զայն: Նորա կիսագունտը յաւիտեան պիտի մնայ կեղրոնական իրողութիւն արդի պատմութեան, մեծ տարր ի քաղաքակրթութեան, եւ զուլի մարդկային ազատութեան բովանդակ շէնքին: Քոլոմպոսի գիւտն Ամերիկայի կարեւորագոյն դէպքն է քրիստոնէական թուականութեան սկզբնաւորութիւնն հետէ:

ՆԱԽՆԻ ԲԺԻՇԿԻ

Նախնի յոյնք բժշկականութեան արուեստը պատուելու բազմաքէն մղեալ աւանդութիւն մը հնարեցին թէ մարդիկ զեղօրէից առաջին ծանօթութիւնն ստացան աստուածներէն եւ կիսաստուածներէն: Հըռոմայեցիք թէպէտ առ հասարակ աւելի գործնական ժողովուրդ էին քան Յոյնք, աւելի նուազ կարեւորութիւն կ'ընծայէին բժշկականութեան արուեստին, եւ դարբնով քիչ յարգ կու տային բժշկաց: Օտարականաց վրայ, որք կը յիսրձէին հաստատել այդ արուեստն ի Հոմ, կը նայուէր արհամարհանօք եւ կասկածով:

Կատոն երէց կ'ըսէր թէ այս բժիշկք եկան Հոմ ժողովուրդն սպառելու համար: Կը յորդորէր իւր բարեկամները հեռի կենայ անոնցմէ. եւ նախամեծար կ'ընտրէր որ իւր ընտանիքն եւ դրացիք զիմէին զեղաղրներ պարունակող հին գիրքի մը, զոր հաւանականապէս իրեն տուած էր իւր հայրը եւ սա ընդունած էր իւր նախնիքներէն:

Բարեկեցիկ Հոմայեցիք ունէին սեպական բժիշկ իրենց տան համար: Սոքա էին գերիներ, վասնզի, զարմանալի բան, հոմայեցի բազում գերիներ հմուտ էին մատենագրութեան, արուեստից եւ գիտութեանց: Եղաւ ժամանակ որ զերի բժշկի մը վաճառման գինն էր վաթսուսանդղ. ոսկւոյ հաւասար գումար մը:

Յուլիոս Կեսարու, բժշկաց քաջալերէին, ժամանակէն ետքը, բժշկականութեան արուեստն սկսաւ բարձրացունել իւր զուլքը Հոմայ մէջ, եւ աւելի յետագոյն ժամանակաց մէջ տաղանդի եւ պատուաւոր զրից տէր անձինք, թէպէտ ընդհանրապէս օտարականներ, մտան բժշկականութեան պաշտօնս: Անոնցմէ ոմանք զիղեցին մեծ հարստութիւն, եւ մին քանի մը տարուց մէջ շահեցաւ առ նուազն հարիւր հազար անդղ. ոսկւոյ հաւասար ստակ:

Քանի մը երկրաց մէջ ուր բժիշկք չէին յաջողեր, հիւանդք կը դուրէին ճամբաներուն քովերը որպէս զի նման հիւանդութիւնէ անողջացած ճանապարհորդք զեղեր թելադրէին անոնց: Ի Հոմ այս սովորութեանց յաջորդեց խանութներու մէջ զանազան զեղեր վաճառելու սովորութիւնը: Յայնժամ, նման արդի ժամանակաց, կը գտնուէին շատ մը սուտ բժիշկներ. եւ կառավարութիւնը, ի պաշտպանութիւն հանրութեան, հրաման հանած էր որ բոլոր զեղօրէից ամաններուն վրայ գրուէր զեղին յատկութիւնը, զայն հնարողին անունը, հիւանդութիւնը որոյ համար պիտի գործածուէր զեղը, անոր բաղադրիչ մասերուն ցանկը եւ լիակատար հրահանգ թէ ինչպէս պէտք էր գործածել զայն:

Եթէ ոք ունենար ստամոքսի հիւանդութիւն, հրահանգ կը տրուէր կարգալ բարձր, յստակ եւ որոշ ձայնիւ գիրք մը կամ ճառ մը եւ յետոյ չափաւոր մարմնամարդ ընել:

Բժիշկք այժմու նման կը բաժնուէին այլ եւ այլ հիւանդութեանց. մասնազէտներու. ոմանք էին ակնաբոյժ, ոմանք կոկորդի բժիշկ, եւն. Մինչեւ իսկ այդ վաղեմի ժամանակաց մէջ կանայք բժշկական արուեստին կը պարապէին, թէպէտ չէին հասներ այնքան բարձր աստիճանի:

Վերաբոյժք կը գործածէին զանազան գործիներ, բաւական նման այժմու գործեաց: Ունէին ականջաքոր (նշալ), գրիկ (նոֆա; լերնա), ոսկր կտրելու գործիներ, եւ նմաններ: Շատ կանուխ ժամանակաց մէջ ատամնաբոյժք ծանօթ էին, ինչպէս հին հեղինակ մը կ'ակնարկէ, ակտաներուն խոռոչները ոսկւով լցունելու սովորութեան:

ՔՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՔ

ՊԱՏՄԱԿԱՆՈՒԹԻՒՆ ԱՒԵՏԱՐԱՆՍ (Շար. «Ա. Ե. Բ. Ե. Բ.» է 6 էլէն)

3. Յիսուսի քանակ կենսագրութիւնն ունինք ի ձեռին. իրողութիւն մի որով կ'առաւելու մեր հաւատքն յԱւետարանս: Անձնիւր Աւետարան կը զանազանի յայլոց Մատթէոսի Աւետարանը յայտնապէս զբռնուած է Հրէից համար, փաստաբանելու թէ Քրիստոս Հին Կտակարանի Մեսիան է: Մարկոսի Աւետարանը, որպէս յայտ է գրուեցաւ վասն Հոմայեցեաց եւ, որպէս կը հաստատեն միահամուռ վաղեմի պատմիչք, ընդ տեսչութեամբ Պետրոսի, ցոյժ տալու զՔրիստոս իբրև Որդի Աստուծոյ, հզօր ի գործս: Դուկասի Աւետարանը, ընդ

տեսչութեամբ Պողոսի, թուի թէ գրուեցաւ Յունաց համար, հաստատելու Բրիտանաց շնորհաց եւ վարդապետութեան հանրականութիւնն, ոգորմածութիւնն եւ մասնաւոր քաղցրութիւնն: Իսկ Յովհաննու Աւետարանը յայտնապէս շարագրուեցաւ համարէն քրիստոնէից համար՝ փաստելու զի Յիսուս մի է ընդ Հօր: Թէիւ զանազան, այսու հանդերձ իւրաքանչիւրին յատկութիւնք աստիճանաւ իւրիք կը գտնուին բոլոր այլոց մէջ: Քրիստոսի Աստուածութիւնն միայն Յովհաննէս չվարդապետեր. ոչ իսկ Նորա Աւետարանին հանրականութիւնն ու քաղցրութիւնն Ղուկաս եւեթ: Նոցա միջեւ երեւցած հակասութիւնք ժխտելով ստուծեան ու խորագաւթեան տեսութիւնն կը միտին զօրացունել համարումն այն մարդոց անաչառութեան ու հաւատարմութեան մասին: Սոքա գրեցին զոր ինչ տեսան եւ որոց կը հաւատային: Մինչդեռ աւետարանական պատմութեանց մէջ այնքան յոգնաթիւ բացեր կան, կարելի չէ, եւ ապաքէն չէ իսկ հարկաւոր, ցոյց տալ մի կատարեալ համաձայնութիւն: Չորից պատմութեանց զգուշեալ ընթերցմամբ այն եղբարկացութեան կը հասնինք թէ տարբերութիւնք կը հատատեն յաւետ քան կը տկարացունեն ամբողջական սուլաբութիւնն իրականութեան ու հաւատարմութեան էական ճշմարտութեան:

4. Չորից աւետարանաց փաստն առաւել եւս կը զօրանայ առաքելոյն Պողոսի կարեւոր վկայութեամբ: Բաց յԱւետարանաց, որ կը հաստատեն սրբազան պատմութիւնները, ունինք նաեւ Պողոսի չորս անվիճելի նամակներն, այսինքն Թուղթ առ Հռովմայեցիս, Թուղթ առ Գաղատացիս, Ա. եւ Բ. Թուղթ առ Կորնթացիս: Սկիսածիկեան փիլիսոփայք կ'ընդունին ընդհանրապէս թէ սոքա գրուեցան ի ձեռն Պողոսի, յընթացս երեսուն ամաց յետ խաչելութեան: Այս մասին Տր. Շաֆթ կը գրէ. «Սոքա կ'ակնարկեն Տեառն մերոյ ծննդեան մի կնոջէ յարքունեաց Գաւթի, Նորա անմեղ կենաց եւ անթերի օրինակին, քաւիչ մահուան, յաղթապանծ յարութեան յերրորդում աւուր, Նորա յոգնաթիւ յայտնութեանց առ իւր աշակերտս, համարածան Նորա եւ քաղվելոյն ընդ ալմէ Աստուծոյ, ուստի պիտի վերադառնայ դատել արդարութեամբ զհամայն մարդիկ, Նորա հետեւողաց զինք պաշտելոյն, հեղման Հոգւոյն Սրբոյ եւ հաստատութեան Եկեղեցւոյ յերուսաղէմ:» Պողոս մանրամասնաբար կը պատմէ Բրիտանացի զանազան երեւումներն յետ յարութեան: Իւր թղթեր կը տապալեն առաւելական տեսութիւնն: Ժամանակամիջոցը այնքան կարճ էր զի չէին կրնար գոյնալ առասպելական ցնորք, որոց կը վերադրէր Շթրաւս զհրաշս: Պողոս կը գրէ ի միջի այնպիսեաց որք անձամբ կը ճանչնային զՔրիստոս. կենդանի էին շուրջ հինգ հարիւր վկայք որոց անուններ ծանօթ էին եւ զորս գտնելով կարելի էր հարցունել որովհետեւ: Այս առաքել զանազան գրուածոց մէջ, որոց գէմ յաջող առարկութիւնք չկարեն լինել, կու տայ իւր յաւելուածական վկայութիւն Աւետարանի պատմութեան ճշմարտութեան նկատմամբ: Մարաթոնի պատերազմին ու կեսարու մահուան միջեւ քանի՞ գէպք պատմուած են հինգ ուրոյն, կարող եւ ըստ երեւութիւն արժանահաւատ պատմիչներէ որ ժամանակակից եղած լինին նկարագրեալ զիսկայ: Մեք

ունինք աստ հինգ պատմիչներ, պարունակելով նաեւ զՊողոս իբրու ուրոյն աւետարանիչ, որ Աւետարանի պատմութիւնը գրած են եւ այն այնպիսի իմն եղանակաւ զի յինքն կը գրուէ մարդկային սեռի վրատահութիւնը:

5. Աւետարանաց պատմական ճշմարտութեան միւս եւս կարեւոր ապացոյց է նոցա կանուխ ժամանակ հոչակուիլն եւ ընդունուիլն իբրու ճշմարիտ: Անտարակոյս նախնի Եկեղեցիին կը հաւատար Բրիտանացի յարութեան ի մեռելոց: Վաղեմի Բրիտանիէութիւնն առանց այս հաւատոյ չկրնար բացատրուիլ: Նոր կտակարան մեծաւ մասամբ յարութեան գրականութիւնն է, առանց որոյ նախնի քրիստոնէական Աստուածաբանութիւն անհասկնալի կը լինի: Չհնինիկ կ'ըսէ, «Պատմութիւնն որոյ ճշմարտութիւնը կ'ընդունի մի ժողովուրդ ոչ միայն պատմագրին վկայութիւնն կու տայ մեզ, այլ նաեւ վկայութիւնն այն ազգին որոյ մէջ կը գտնէ վարկ:» Առաջին աշակերտք, յոստանի Հրէից, հոչակեցին Բրիտանացի հրաշից ճշմարտութիւնն նորա թշնամեաց առջեւ: Հրեայք չհակառակեցան հրաշից պատմութեան, որում անշուշտ պիտի հակառակէին եթէ այն արդիւնք լինէր Յիսուսի մի քանի հետեւողներու մեքենայութեանց: Յարութեանէ սոսկ մի քանի շաբաթ վերջ, ի Պենտեկոստէին, Պետրոս քարոզեց. «Ով Իսրայէլացի մարդիկ, լսեցէք աս խօսքերը. Յիսուս Նազովրեցին՝ Աստուծմէ ձեզի ցուցուած մարդ մը զօրութիւններով ու հրաշքներով եւ նշաններով, որ Աստուած անոր ձեռքովը ըրաւ ձեր մէջը, Ինչպէս գրուած է. . . .» Եթէ չլինէր խաչին գայթակղութիւնն, իւր վսեմ յայտնութեամբ մարդկային մեղաց, իւր հեղութեամբ, բարութեամբ եւ գթով, եթէ Յիսուս յայտնուէր իբրեւ այնպիսի Մեսիա զոր կ'ուզէին հրեայ առաջնորդք, առանց հրացայտ յանդիմանութեանց ընդդէմ ողոյն հպարտութեան, ծիսականութեան եւ ազգային վրիժառութեան, նոքա աւելի ընդհանրապէս պիտի զիջանէին Նորա պահանջներուն: Որպէս գրած է Էտրըշայմ, «Չուրանալով Յիսուսի հրաշքները, կը նկատէին զՆա սատանայական ազգեցութեան մշտական կեդրոն, ոչ վսեմ զի գտան մեղք Անոր վրայ, այլ որովհետեւ Նորա Սրբայութիւն Աստուծոյն հակառակ էր իսկովին նոցա Սրբայութիւն Աստուծոյն:» Նա այսպիսի դադափարներով երբ պնդեց թէ Ինքն էր նոցա Մեսիան, նոքա ազգակա բարձին, «Հայհոյէ դա:» Սակայն պատմութիւն Նորա դադափարին աստուածային լինելն հաստատած է. իսկ նոցա դադափարն եղաւ «մղեղի պէս որ հովը կը ցրուէ:» Սրբ իսկզբան անդ քրիստոնէական կրօնի առաջին քարոզիչք խօսեցան Յիսուսի բանից ու գործոց ճշմարտութեան մասին եւ մինչեւ յաջորդ սերունդ չխօսեցաւ ժողովուրդն հակառակ սոյն իրողութեանց:

6. Եկեղեցւոյ արագ յառաջընթացութիւնն եւ յաղթանակն կը կազմեն միւս եւս ապացոյց ճշմարտութեան Աւետարանի պատմութեանց, որոց վերայ հիմնեալ է ինքն Եկեղեցիին: Ըստ Մր. Կլատոթընի չեղաւ երբեք այնպիսի մի պայքար անգուղական որպիսի էր Բրիտանիէութեան պայքարն ընդդէմ հնովմէական աշխարհին: «Նախատեալ ի սկզբան անդ անարդ հրէականութեան հետ ունեցած կապակցութեամբ,

ատելի իւր անհրապոյր բնութեամբ, կը յետոյր էապէս վկայութեան մարդոց՝ աղքատ, տգէտ եւ սակաւաթիւ: Նոցա ցանկին մէջ չկար ընդ երկար մի մարդկային հանձար միակ բացառութեամբ Սրբոյն Պողոսի:» Պատմաբանն Կիպըն հինգ պատճառաց կը վերագրէ նախնի Բրիտանիէութեան արագ տարածուիլն, որոց երրորդն կը կազմեն Եկեղեցւոյ տրուած հրաշալի զօրութիւնք: Միւս պատճառք են առաջին քրիստոնէից բուռն եռանդն, եռանդ որ խառն էր սիրոյ հետ, խորին եւ տիրող հաւատ յանմահութիւն իբրու վիճակ վարձատրութեան եւ պատժոյ, դործնական առաքինութիւնք նախնի հաւատացելոց եւ շուրջ մի դար յետ մահուան առաքելոց, նոցա մեղմ այլ արդարակորով Եկեղեցւոյն Կրիստոնէութիւն: Սակայն մինչ վերանալով սոյն երկրորդական պատճառներէ կը հարցնենք թէ վսեմ էր քրիստոնէայք նոյնօրինակ բացարձակապէս անձնասէր մի դարու մէջ կը տածէին այնպիսի անձնուրաց եռանդ, էր այնքան վստան էին յապաղայն, մինչ աշխարհ ընդհանրապէս սկեպտիկեանութեան յարած էր, էր նոքա իրագործեցին առաքինութիւններ գեր ի վերոյ քան դայլս որ շուրջ նոցա եւ իւրեանց եկեղեցական կենաց մէջ կ'ապրէին սիրելի եղբարց նման ի միջի նախանձաբեկ մի աշխարհի, կը հասնինք նոցա հաւատոյն զոր կը տածէին այդ սքանչելի պատմութեան վրայ որ էր հիմն իւրեանց քարոզութեան, նոցա հաւատոյն ի յարութիւն Բրիտանացի, դերագոյն ապացոյց իւրեանց անմահութեան: Կը հասնինք նաեւ նոցա հաւատոյն առ Անձն աստուածային որ էր իւրեանց յարուցեալ Սրբայն, որում յարած էին անմահ սիրով, որ ներշնչեց ի նոսա ամեն դործնական եւ տեւական առաքինութիւններ, որոյ վեհափառութեան առաջի ամենեքին հաւասար գոյով պարտէին սիրել զմիմեանս խանդակաթ սիրով:

Ետզկատ
ԵՊՈՐՑ Ե. ԿԻԼԵԱՆ

ԹՈՆԴՐԱԿԵՑԻԲ
ԹՈՆԴՐԱԿ Հարքայ գաւառի մէկ գիւղին անունն է: Մինչեւ ցայժմ դարձեալ նոյն անունով կը կոչուի այն գիւղը, Թոնդրակ գիւղ: Մարաց ժողովուրդք եւս Տօնտրաս կը կոչէ:

Հայք Բնիք կամ ըստ հասարակ գիւղացւոց Բնիքը բառն ունին: Թուրք աղք Բնիքը, եւ Մարք Բնիքը կ'ըսեն: Բառին բուն արմատը հայ լեզուով յօրինուած է քան թէ ուրիշ լեզուով: Թնիք կը նշանակէ Բնիք, այսինքն Չուր եռացնող, քանզի գաւառական լեզուով Չուրին թօն կ'ըսեն: «Դուրս կը թօնէ» կը նշանակէ «Դուրս կ'անձրեւէ:» Թոնդրակ կը նշանակէ փոքր թոնիր, նաեւ կը նշանակէ թոնրի ակ կամ աչք, որ թոնրի վարի կողմը ծակով մը բացուած է որպէս զի օդը անոր միջոցով մտնէ թոնրին մէջ եւ փայլը վառուի: Սրբ Հարքայ Թոնդրակ գիւղին իր փոքրիկութեան պատճառաւ այդ անունը վրան ունի քան թէ միւս պատճառաւ: Այլ, «-ի, -ի վանկերը երբ կը գրուին բառի մը վերայ՝ այն անունն փոքրիկութիւն կամ մանր լինելը կը նշանակեն: Թոնդրակ ոչ թէ մեծ, այլ փոքրիկ թոնիր կը նշանակէ: Այդ գիւղին դերք այդ դաշտին մէջ այնպէս ձեւ մը ունի որպէս փոքրիկ թոնդրակ մը: Շատ գիւղերու անուններ փոխուած են եւ շատ գիւղերու ալ մոռացուած եւ կոր-

սուած են, բայց Թոնդրակի գիւղին անուանը նոյնը մնացած է գրեթէ Թ. դարէն մինչեւ ցայժմ: Այն ժամանակներ Յակոբոս եպիսկոպոս անուանով ոմն Հարքայ գաւառին հոգեւոր վիճակաւոր էր, եւ թերեւս կորայ Աբ. Դանիէլ վանքը կը նստէր եւ կը թմբէր Հարքայ ամբողջ գիւղեր: Յակոբոս եպիսկոպոսի առաքինութիւններ եւ ճգնութիւններ կը պատուէ Արիստակէս Լաստիվերցին: Չէ թէ եպիսկոպոսն ընդունեց Թոնդրակեցւոց վարդապետութիւններն, այլ Թոնդրակի գիւղի հայ ժողովուրդն ընդունեց եւ հետեւեցաւ նորա քարոզած վարդապետութիւններուն: Եպիսկոպոսին անունը մտաւորեցաւ եւ Թոնդրակայ անունը մնաց: Եպիսկոպոսը հրատարակեց ազանգը, բայց անոր անունը Թոնդրակեցւոց Ազանգը տարակուեցաւ:

Այս եպիսկոպոս բողոքեց եւ մերժեց այն կանոններն որ հետզհետէ կը հաստատէին եւ իբրեւ էական վարդապետութիւն կը պահանջէին որ ժողովուրդն ընդունի: Լաստիվերցին անսխալ կանոն էին կ'ըսէ այդ կանոններուն համար զոր Յակոբոս կը մերժէր, երբ Սուրբ Դրոց հակառակ կը դռնէր: Կը մերժէր քահանայի պատարագով մեղքի թողութիւն լինելն: Կը մերժէր իւզով մկրտութիւն ընել: Կը մերժէր մարդոց բարեխօսութիւն եւ կ'ուսուցանէր որ Քրիստոսի միջնորդութեամբ աղօթեն: Կը մերժէր անասուններէն մատաղ ընելը: Այս անձը ընարութիւն կ'ընէր արժանաւոր եւ անարժան քահանայից մէջ: Անարժանները կը դադարեցունէր քահանայադործութենէ: «Այն անձին որ մեղք դործած է եւ ինք անձամբ չաղաչխարեր ո'չ յիշատակութիւն եւ ո'չ եւս պատարագ կարող է օգուտ ընել» կ'ըսէր:

Հայ Եկեղեցւոյ կանոնն եւս կարգալոյժ կ'ընէ անարժան քահանայն: Եթէ անարժան աշխարհական շունի արտօնութիւն մերձեւալու Տէրունական Սեղանոյն, անարժան քահանայն ինչպէս կը համարձակի քահանայադործել: Եկեղեցւոյ կանոնն այսպէս կ'աւանդէ. «Եթէ յառաջագոյն սխալեալ իցէ, ոչ է արժան քահանայութեան. մի՛ ձեռնադրեցի, զի անարժան է եւ ոչ անուզ զիշխանութիւն քահանայութեան: Եւ այսպէս եւ թէ յետ ձեռնադրութեան սխալեցի, այլ ոչ ունի իշխանութիւն կատարել գեթ ի սորհուրդ եկեղեցւոյ. այլ թէ աղաչխարեցէ, ընդ ժողովրդեանն աղօթեցէ: Իսկ թէ լրբութեամբ արասցէ զգործ քահանայութեան անարժան գոյով, այնպիսին զբարկուութիւնն Աստուծոյ բերէ ի վերայ ժողովրդեանն եւ ինքն ընդ աստուածասպաննն դատեցի: Չի սատանայ ջանայ զբազումս յանարժանիցն յօժարեցուցանել ի լինել քահանայ որք չեն կարող եւ արժանի գնայոց ընդ երկնային ճանապարհ եւ չեն սուրբ մտօք, հոգւով եւ մարմնով, խորհրդով, բանիւ եւ գործով... Չի թէ սղէտ է կամ թերեհաւատ, կամ ծոյլ է եւ քնոտ, կամ ազան է եւ արծաթասէր, կամ որկրամոլ է եւ զիսակէր, կամ ամբարտաւան է եւ հպարտ, կամ գէշ է, կամ բարկացող է եւ չարասէր, կամ չարայօժար է եւ ոխակալ, կամ մախացող է եւ չարայուշ, կամ շատախօս է եւ դատարկաբան, կամ կատակող է եւ ծաղրածու, կամ վիճարան է եւ քսու, կամ աներկիւղ է եւ անոյտ... այսպիսեաց լաւ է քար ի պարանոց արկանել ի խորս անդնդոց, քան զյօժարելն ի քահանայութիւն»:

Ինչպէս այս մեղքերէն մէկուն մէջ գրանուող մը չէ արժան քահանայութեան, նոյնպէս այդ մեղքերէն մէկը եթէ դտնուի քահանայի մը վերայ, այլ ոչ ունի իշխանութիւն հոգեւոր պաշտօն կատարելու: Հարքայ գաւառին վիճակաւոր Յակոբոս եպիսկոպոսը, որ զանարժան քահանայ կարգալոյժ կ'ընէր, այս կանոնին համեմատ կը դործէր: Ուստի անարժան եկեղեցականք աւելի թշնամացան նորա դէմ: Մովսէս Խորենցու ժամանակն եւս անոնք որք արծաթով ընարած էին եւ ոչ Հոգւով, եւ անձամբ առած էին պատիւ եւ ոչ յԱստուծոյ, տիրած էին ժողովրդեան վերայ: Ասոնք մէկզմէկ յառաջ կը բերէին եւ կը ձեռնադրէին. իսկ արժանաւորք եւ հոգեւորք մատուցողք զգալու էին, եւ ժողովուրդն կը մնար եւ կը հեծէր միւս բռնաւոր դասուն լուծի ներքեւն: Երբ այդ կարգի անձինք պաշտօնապէս կը բարձրանան, իրենց նմանները կը ձեռնադրեն եւ անոնք կը յաջորդեն իրենց: Ուստի Խորենցին սրտի ցաւով կ'որբայ Հայ Եկեղեցին, որ այսպիսեաց իշխանութեան ներքեւ անցած է: «Ոչ տեսանիմ զբանաւոր քո հօտ ի վայրի դալարուջ առ ջուրս հանգրտեան տածեալս եւ ոչ ի փարախ հաւաքեալս» Աբ. Սահակայ եւ Մեսրոպայ բարի հոգեւոր հակառակ պաշտօնեայք յառաջ եկան, բազմացան եւ տիրեցին ժողովրդեան վերայ: Անոնք փաղաքեցին գծողութեան, եւ ժողովուրդ ուրախ եղաւ որ մեղքի պատճառաւ սաստող եւ յանդիմանող պաշտօնեայք յոյժ սակաւաթիւ եղան:

Ոչ միայն Թոնդրակի գիւղ հետեւեցաւ Յակոբոսի քարոզութիւններուն, այլ Ղլաթայ լեռան ստորոտ եւ չրջապատ եղած բազում գիւղեր ընդունեցին զայն: Սարգիս կաթողիկոս, որ Անի կը նստէր, ինչ եւ իցէ միջոցաւ ձեռք բերաւ զՅակոբոս եպիսկոպոսն եւ աղուեսադրոյժ խարան նորա երեսին վերայ դրաւ եւ խառան վիզը անցունելով պարագայը դուռներ եւ փողոցներ, եւ առջեւէն մուսետիկ կը կանչէր բարձր ձայնով եւ կ'ըսէր, «Ով որ թոնդրակեցի մարդադէմ զազաններուն փարախը մտնէ՛ այսպէս հատուցում պիտի առնու:» Այնուհետեւ բանտին մէջ ձգեցին որ դուրսէ այդ աղանդէն ետ դանայ: Յակոբոս եպիսկոպոս վերջապէս բանտին մէջ վախճանեցաւ: Լաստիվերցին կը գրէ, «Մեռաւ իբրեւ գէշ եւ թաղեցաւ իբրեւ զգէշ» Մանանդիի Շիրին բերդաքաղաքի մէջ ընտկող Կուսմիկ արեղան եւս այդ նոյն վարդապետութիւնը քարոզեց, եւ համոզուեցաւ եւ յարեցաւ նորա վարդապետութեանն Հրանդոյ տիկին եւ նորին եղբայրը Վրվէն իշխանը:

Այս աղանդին հետեւողներուն ոմանց զուրք քարէ սանդի մէջ ջախջախելով եւ ոմանք ետացեալ ջուրի մէջ խորշատելով հազիւ մաքրեցին զերկիրն: Բայց աստ եւ անդ զանազան անկիւններու մէջ մնացին ոմանք ի ծածուկ, ինչպէս եւ յարատեւեցին այս կրօնքին մէջ, բայց անյայտ կերպով: Խնուսի մէջ պահուած մնաց այդ վարդապետութիւնը: Անոնք իրենց պաշտաման զիրք եւս ունեցած են, որոյ անունն է «Բանալի ձշմարտութեան» Երբ Հայեր կը բերեն զանոնք մատաղ ընելու, Թոնդրակեցիք կ'երթան դառին մօտ եւ ձեռք զնելով դառին զլիտոյն վերայ կ'ըսեն, «Այ խեղճ կենդանի, Թորոսը մեղք կը դործէ եւ դուն նորա տեղ կը զոհուիս. դուն ինչ յանցանք ունիս, մեղաւորն Թորոսն է» Այդ գրքին մէջ աղօթքներ եւս գրուած

կան եղեր. ասոնցմէ երկու աղօթք ի բերան գրեցին Խնուսի Թոնդրակեցիք: Առաջին աղօթիւ — Տէր Աստուած ամենակարող, երկնի եւ երկրի ստեղծող, զքեզ խոստովանիմք, դաւանիմք եւ երկիր պաղանեմք. պահեա եւ պահպանեա զմեզ յերեւելի եւ յաներեւոյթ թշնամեաց, ի մահէ եւ ի մահտարածամէ, յերկրաշարժութենէ, ի ժանտացաւէ եւ յալկոծմանէ աշխարհիս, յամենայն որողայթից գիւաց, որք յաւնին ի վերայ մեր. պահեա Որդւոյդ քոյին բարեխօսութեամբ. Ամէն:

Երկրորդ աղօթիւ — Թաղաւոր թաղաւորաց, Աստուած ստեղծող, Տէր եւ Արարիչ, որ ստեղծեցեր զնոզի եւ զմարմին մեր, եւ ամենայն բարեօք զարդարեցեր եւ պահպանեցեր, սիրեցեր եւ նախախնամեցեր, եւ ամենայն փառօք զարդարեցեր. փառք, դու հուրթիւն եւ երկրպագութիւն քեզ մատուցանեմք ամենազօր տէրութեանդ. Ամէն:

Թոնդրակեցիք այս աղօթքներ կ'ուսուցանէին իրենց որդւոց, կ'աղօթէին հապա թէ կը մտնէին անկողին: Երբ մահանբաւէր հալածանքն պաշարեց զԹոնդրակեցիս, նոցա կրօնական առաջնորդներն խափանուեցան, եւ ժողովուրդն անցաւ մատաղամատոյց առաջնորդաց ձեռքն, անոնց ժողովուրդներուն խառնուեցաւ եւ անոնց հետ ժամատուներ յաճախեց, եւ գրեթէ անոնց նման եղաւ: Բայց Ձեռնադրութիւն, Մկրտութիւն եւ Հաղորդութիւն եւ ընտանեկան աղօթքն ծածուկ պահեցին իրենց մէջ: Հայ քահանայի մկրտածն կրկին կը մկրտէին. նոյնպէս Հաղորդութեան մատին ժամն ալ կը հաղորդուէին եւ իրենք ալ զատ հաղորդութիւն կ'ընէին: Միայն քահանայի ըրած պտակն եւ թաղումն չէին կրկնել: Հայ քահանայք կարող չեղան այդ բանը դիտելու եւ հասկնալու: Թէեւ ասոն ասոն կը խօսուէր թէ պահքը լուծած են, բայց քանի որ ժամ կու գային եւ նոցա դաւակուէր կը մկրտուէին եւ միւսոնով կ'օծուէին եւ իրենք ալ կը հաղորդուէին, լոկ պահք լուծելու պատճառաւ հալածանք չէին յարուցաներ նոցա դէմ: Թոնդրակեցւոց ձեռնադրեալ կրօնական պաշտօնեայն անսուս եւ աշխարհական մարդու հանդերձով էր: Ձեռնադրութիւն, Մկրտութիւն եւ Հաղորդութիւն գաղտնիք էին Խնուսի Թոնդրակեցի ժողովուրդին մէջ: Երբ նոր հարս մը բերէին տան մէջ, ամեն բան անկէց զաղտնի կ'ընէին, մինչեւ որ համոզէին զայն: Ամենէն առաջ պահք ուտել կը սովորեցունէին անոր, յետոյ մատաղի անօգուտ լինելն, յետ այնորիկ մեռոնի եւ մասունքներու աւելորդ լինելն, եւ երբ ատոնք կ'ուսանէր, այն ասոն Քրիստոսի բարեխօսութեամբ աղօթելն կ'ուսուցանէին: Այնպէս կը պաշարէին հարսին միաքն որ երբ դարձ կ'երթար իւր հօր տուն, այդ բաները անոնց չէլ իմացներ: Երբ էրկան տունը գար Թոնդրակեցի էր, եւ երբ հօրը տունը դառնար, մատաղաղէն Հայ էր:

Բայց Ձեռնադրութիւն, Մկրտութիւն եւ Հաղորդութիւն հարսէն ծածուկ էր: Երբ հարսն կը դաւանէր եւ կը մկրտուէր, այն ասոն իբրեւ անգամ եկեղեցւոյ կը յայտնէին անոր այն երեք բաները ալ: Ես երեք ձեռացեալ անձինք տեսայ որ անոնց մկրտութիւնով մկրտուած էին: Իրենց որդիները քահանան ալ կը մկրտէր եւ իրենց երկրադործ պաշտօնեան ալ կը մկրտէր:

Տրապիզոն Ս. Գ.

Կ. պոլսոյ Երիտ. Քրիստ. Ընկերակցութեան աղօթից ժողովը, տեղի պիտի ունենայ վաղը, ժամը Զին ըստ Թուրքաց, Պայպըլ Հառուսի մատրան մէջ: Աղօթքի նիւթն է Մատ. Ե. 8:

հետ, սակայն դեռ յայտնի չէ թէ կառավարութիւնն ինչ ընթացք պիտի բռնէ :

Հավայեան կղզեաց ամերիկեան դեսպանը, ի խնդրոյ տեղւոյն վարչութեան, առժամանակեայ թեւարկութիւն հաստատած է այդ կղզեխումբին վրայ, մինչեւ որ հավայեան պատգամաւորաց եւ Միացեալ Նահանգաց կառավարութեան միջեւ կատարուած բանակցութեանց արդիւնքը յայտնի ըլլայ :

Ռուսմանական վաղեմի սովորութեան մը համաձայն դահաժառանգ Ֆէրտինանտ իշխանի եւ Մարի իշխանուհոյ ամուսնութիւնը յիշատակելու համար նորապի աւուրին Պուքրէշ հասնելէն ետքը երեսուներկու զիւղական հարսանիքներ կատարուեցան ի ներկայութեան արքայազուն փեսային եւ հարսին : Իւրաքանչիւր ամուսնու կը ներկայացուներ Ռուսմանիոյ երեսուներկու դահաժաններէն մին, եւ զիւղացի նորաստեղծ հագած էին իրենց տեղւոյն յատուկ զարդարուն հանդերձները : Շահեկան եւ հանդիսաւոր արարողութիւնէն ետքը երեսուներկու ամուսնորը ծաղիկներով զարդարուած կառքեր նստան եւ թափօրով պալատ ուղեւորեցան : Երբ պալատ հասան, իրենց խնջոյք մը արուեստը իշխանին եւ իշխանուհոյն կողմէ, որք իւրաքանչիւր ամուսնի իբրեւ օժիտ նուիրեցին քսակ մը ոսկի : Թագաւորը եւ իշխանը նաեւ բաժակ պարպեցին իւրաքանչիւր նորաստեղծ ամուսնի կենաց եւ բաժակահարութիւններ ըրին զիւղացի փեսաներուն հետ :

Չարեւիչը իւր ի Սբ. Փեթրոսպուրկ վերադարձէն ի վեր իւր հօր շատ անգամ խօսած է այն առանձին խօսակցութեանց վրայ զորս Պերլինի մէջ ունեցած էր Վիլհելմ կայսեր, նախարարապետ Քաիլիֆի եւ այլոց հետ : Չարը մեծ կարեւորութիւն կու տայ այդ խօսակցութեանց եւ անոնց նշանակութիւնը հազորգած է իւր Արտաքին գործոց եւ Պատերազմական նախարարներուն : Նորին վեհափառութիւն Սբ. Փեթրոսպուրկի գերմանական դեսպան Զորֆոն Վէրաքի ալ իւր խօսակցութեան ընթացքին յայտնած է Վիլհելմ կայսեր եւ իւր զաւարտաց միջեւ եղած մեծ համաձայնութեան համար, ի մասնաւոր խաղաղութեան պահպանման մասին իրենց ունեցած զաւարտաց միջեւ : Գերմանական լրագիրք ունիք կը ծանուցանեն թէ երբ Չարեւիչը Պերլին կը գտնուէր, յայտարարած է թէ ֆրանքեւստական դաշնակցութիւն մը գոյութիւն չունի : սակայն Գերմանացիք այդ իրողութեան համոզուելու համար պէտք չունին այսպիսի յայտարարութեան, վասն զի Ռուսիա առանց ինքզինք ռեւէ դաշնադրի տրամադրութեամբ կայսերու կրնայ վստահ ըլլալ որ երբ եւ Գերմանիոյ վրայ յարձակի, Ֆրանսա պիտի դորձակցի իրեն :

Լոնտոնէ փետր. 14 թուականաւ զարնուած հեռագիր մը կը ծանուցանէ թէ Մր. Կլատսթըն Երեսփոխանական Ժողովոյ ներկայած է իւր իտալական ծրագիրը : Սոյն ծրագրի համեմատ օրէնսդիր մարմին մը պիտի հաստատուի ի Տըպլին առանց դպչելու Լոնտոնի կայսերական Խորհրդարանին իրաւասութեան : Յիշեալ մարմինը պիտի բաղկանայ Օրէնսդիր Խորհուրդէ մը, որ պիտի ունենայ 48 անդամ, եւ Օրէնսդիր Ժողովէ մը, որ պիտի ունենայ վեց տարուան համար ընտրուած 103 անդամ : Փոխարքան պիտի ունենայ լիազօր դորձակիր իշխանութիւն : վեց տարուան համար պիտի անուանուի, եւ պիտի կրնայ պաշտօնանկ

ըլլալ վեհապետին ձեռամբ : Գործադիր յանձնարարութիւն մը պիտի ըլլայ փոխարքային նախարարութիւնը : Օրէնսդիր Խորհուրդին մէջ փոքրամասնութիւնը պիտի կրնայ իւր կարծիքը յառաջ տանիլ : Գառաւորք անփոփոխ են եւ կ'անուանին վեհապետին կողմէ : Լոնտոնի Խորհրդարանին մէջ նստող 80 իտալացի երեսփոխանաց քուէի իրաւունքը սահմանափակ պիտի ըլլայ : Իտալանա պետական ծախուց պիտի մասնակցի ըստ չափու համեմատութեան :

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Մ. Քառուլայի տրուած մենաշնորհը Էնկիւրիէ կեսարիա եւ Էսկիշէրէ Գոնեա տանող զիծերուն արտօնութիւններէն զատ կը պարունակէ նաեւ Ատաբազարէ մինչեւ Էրէյլի անխանայեքը երկաթուղի մը շինելու արտօնութիւնը : Անցեալ ուրբաթ օր Մ. Քառուլ կայսերական պալատ երթալով իւր շնորհակալիքը մատուց վեհ. Սուլթանի իրեն տրուած մենաշնորհին համար : Այս հինգըթի օր եւս կայսերական ֆէրմաը յանձնուեցաւ գերմանացի արտօնատիրոջ :

Կ. պոլսոյ հելլենական դեսպան Մալքոթըրտաթոյ իշխանի հրաւիրանօք մայրաքաղաքիս հելլէն դաղթականութեան անդամը դեսպանատան մէջ համախմբուեցան եւ յանձնարարութիւն մը ընտրեցին : Չանթայի արկածելոց նպատակաւ հաւաքելու համար ներկայք 12,991 ֆրանք ստորագրելով հանդանակութեան լաւ սկզբնաւորութիւն մը ըրին :

Արաւս շողենաւին Գամարանէ մեկնելէն ետքը հնտախոտէ քանի մը վարակուողներ եւս եղան այդ շողենաւին մէջ, որ այս պատճառաւ խիստ արտօնութեան պիտի կենթարկի : Վեհ. Սուլթանը հրամայած է որ կառավարական պաշտօնեայք մեծ աշարջութեամբ հոգ տանին չթողու համար սր համաճարակը թուրքիա մտնէ : Մարսիլայէ եկող նաւուց վրայ հնգօրեայ արտօնութեան զրուած է : Սուլթանը Երկրագործութեան, Հանքայ եւ Անտառաց նախարար կարգուած է, անցեալ շաբաթ օր իւր նոր պաշտօնին զուլան անցաւ :

Հանրօգուտ շինութեանց նախարարութիւնն սկսած է երթողուլի եւ Քէօթանիոյ դաւաններուն մէջ կարգ մը խճուղիներ շինել որ կարեւոր քաղաքները եւ զիւղերը պիտի միացունեն Անտառուի երկաթուղոյն մօտադոյն կայարանաց հետ : Արդէն եղած խճուղիներն ալ հիմնովին կը նորոգուին : վաւերացեալ յատակաձեւերուն համաձայն 40 քիլոմետր երկայնութեամբ նոր խճուղիներ պիտի շինուին 143 կամուրջներով : Նորոգուող խճուղեաց երկայնութիւնն է իբր 15 քիլոմետր եւ ունին 109 կամուրջներ :

Սամթրակէ կղզւոյն զիւղը, ուր կը բնակի կղզւոյն սակաւաթիւ ժողովուրդը, անցեալ ուրբաթ զիւղեր աւերեցաւ երկրաշարժով մը : Քառասուն տուններ փլան եւ 200 անձինք առանց բնակարանի մնացին : Վեհ. Սուլթանի հրամանաւ շոգենաւով վրաններ, ատաղձներ, ուտեստ, եւ այլն զրկուեցան այդ կղզին : Կ. պոլսոյ բրիտանական դեսպանը երկրաշարժին լուրը լսելուն պէս բրիտանական հիւպատոսին հրահանգ զրկեց 50 ոսկի բաշխել ամենէն աւելի կարօտելոց :

Պուլկարական երկաթուղոյ պարտատուներուն առաջին մասին ստորագրու-

թիւնը անցեալ շաբաթ նշանաւոր յաջողութիւն ունեցաւ ի վիէննա : Առաջարկեալ դումարին քանի մը պատիկն ստորագրուեցաւ :

Քանի մը օր առաջ սաստիկ անձրեւ տեղաց ի Մալթիա, եւ քաղաքին մէջէն հոսող զեռը յորդելով ցած թաղերը ջրով ողողեց : Քանի մը կամուրջներ, նաեւ առաներ ու խանութներ փլան : Բարեբաղդաբար կենաց կորուստ չպատահեցաւ :

Իւսկիւտարի եւ Գատրպիլի կաղով լուսաւորման համար շինուած կաղարանի հանդիսաւոր բացումը երկուշաբթի օր կատարուեցաւ ի ներկայութեան Շաքիր փաշայի, որ վեհ. Սուլթանի կողմէ զրկուած էր, Քաղաքապետ Ռըալան փաշայի, պիլծիական դեսպան Մ. Հորիքսի եւ այլոց : Պիլծիական ընկերութիւն մը հայթայթած է յիշեալ շինութեանց հարկաւոր դրամապուլը :

Եգիպտոսի Խալիվը շաբաթ օր Գահիրէ վերադարձաւ : Ասիուլթէ մինչեւ Ճիրճէ տանող նոր երկաթուղին, զոր Նորին Բարձրութիւն պաշտօնապէս բացաւ նախորդ կիրակին, իբր 125 քիլոմետր երկայնութիւն ունի, կ'անցնի Նեղոսի եզերքէն եւ իբր 600,000 բնակիչ ունեցող բերրի դաւառի մը մէջէն :

Պրուսայի կուսակալութեան Պաղարքէոյ զիւղին մէջ ձեռն ծանրութիւնէն ինն տուններ փլած եւ իբր քսան տուններ եւս անբնակելի եղած են : Նոյն կուսակալութեան Չէնկիլէր զիւղն եւս բոլորովին ծածկուած էր ձեռն ներքեւ : Տուներուն մէջ բանտարկեալ զիւղացիք կը պարտաւորին քանի մը հարիւր մեթր երկայնութեամբ փաղուղի բանալ ձեռն մէջէն եւ այսպէս կարող կ'ըլլան հաղորդակցել իրարու եւ մօտակայ տեղերու հետ : Չմիւսնիոյ լրագիրք կը հրատարակեն ցանկ մը 22 անձանց որք յուրտէն սառած են Այտալ նահանգին մէջ :

Ֆիորենցայէ երկուշաբթի օր զարնուած արտօնութեան համար մը կը ծանուցանէ Պուլկարիոյ Ֆէրտինանտ իշխանի նշանախօսութիւնն Մառի Փի իշխանուհոյ հետ, որ երէց դուստրն է Փարմայի դուքսին, Պուրպոնեան Ռոպէն իշխանին : Մառի իշխանուհի ծնած է 1870ին : Իւր հայրը թէեւ դեռ անչափահաս, Փարմայի տիրող դուքսն էր յամին 1859, երբ Իտալիոյ մէջ պատահած պատերազմներուն հետեւանօք իւր զբոսութիւնը կցուեցաւ վիքթոր Էմանուէլի թագաւորութեան : Իշխանուհոյն մայրն էր դուստր Ֆէրտինանտ Բ. ի, որ էր թագաւոր Երկուց Սիկիլեայցայսինքն Նափոլիի եւ Սիկիլիա կղզւոյն, եւ որ իշխանութիւն վարած է 1830էն մինչեւ 1859 : Ֆէրտինանտ Բ. ի որդին 1860ին յաղթուեցաւ կարիպալիի զօրքերէն, եւ թագաւորութիւնը կցուեցաւ վիքթոր Էմանուէլի երկրին : Ֆէրտինանտ Բ. ի մեծ հայրն Սպանիոյ թագաւորին որդին էր, եւ այս վերաբերութեամբ եւս Մառի իշխանուհի կը վերաբերի Պուրպոնեան գերդաստանին :

ԴՐԱՄԱԿԱՆ

Փետրուար 6/18, 1893

Գոնտոլետ	24 24	Բուժ. Երկ. Բաժին	94 1/2
Պարտուց Երբարան	10	Թղթադրամ (Թասֆէյթ)	84 30
Տիւրք. Գայմէտի	49	Թաճիկութիւն	0 10 5
ԴՐԱՄ, Օւմ. ոսկին 100 է			
Մեծիտէյ	108 20	Ռուսիոյ բուլ	90 40
Մէթալիք	96 20	Նաբոլէոն	88
Պէշիք	101 20	Գրեմից	51 20
Ալթուր	101	Անգլ. ոսկի	140 5
Մանթ թղթադրամ 8 65			

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ
Ի ՏՊԱՐԱՆԻ Ա. ՅԱՊՈՒ ՊՈՅԱՅՆԻ
Ֆինանսայար Եղուրը, Ամերիկան Խան